

ԱՎԿՕՍ

Թ Ի Ի 1 6 2 • 7 Մ Ա Յ Ի Ս 1 9 9 9

Ուիլիըմ Սարոյեանի կեանքի վաերագրականը կը ցուցադրուի մեծ պատաստի վրայ

Սարոյեան՝ Մարդը, Գրողը

Վաղը, Ծաբաթ 8 Մայիս ժամը 20.00-ին Սամաթիոյ Հրաշեայ Աճառեան սրահին մէջ տեղի կ'ունենայ Ուիլիըմ Սարոյեանի նուիրում երեկոյթը, որ կազմակերպուած է ԱՎՕՍ-ի եւ Սահակեան Սանուց Միութեան գործակցութեամբ:

Այս առթիւ պիտի ցուցադրուի Սարոյեանի կեանքը ներկայացնող «Ուիլիըմ Սարոյեան՝ Մարդը, Գրողը» անուն վաերագրական ժապաւէնը, որ պատրաստուած է անոր վերջին 20 տարիներուն գրեթէ անբաժան բարեկամին՝ լուսանկարիչ Փոլ Գալիմեանի կողմէ: Ներկայ պիտի ըլլան Տէր եւ Տիկին Գալիմեանները, որոնք այս ժապաւէնի ցուցադրութեան համար յատկապէս հրաւիրուած են քաղաքս:

Ո՞վ է Փոլ Գալիմեան

Նկարչական արուեստ

տի երկրպագու Փոլ Գալիմեան 1932-ին ծնած է Պէշրուֆ: Նախնական կրթութիւնը խտացած եւ լուսանկարչութեան արհեստը սորված է Դամասկոսի մէջ: 1961-ին իր առաջին լուսանկարչատունը բացած է Պէշրուֆի մէջ:

1964-ին կը տեղափոխուի Մոնթրէալ եւ ապա Միացեալ Նահանգներ՝ Նիւ Եորք եւ Ֆրէզնո, ուր կը բանայ իր երկրորդ աշխատանոցը: Նկարները կը հրատարակուին գիրքերու, լրագրերու, պարբերաթերթերու մէջ եւ որմագրներու վրայ ու կը ցուցադրուին բազմաթիւ սրահներու մէջ:

Գալիմեան յաջողած է մօտ՝ 20 տարի բարեկամը դառնալ Ուիլիըմ Սարոյեանի, որ սակայն տարիներով չէ արտօնած գէթ անգամ մը կոխել նկարչական գործիքին կոճակին: Իսկ բառական ուշ, 1976-ին, մեծանուն գրողին Գալիմեանի կողմէ նկարուած յատկանշական դիմանկարներէն մին ընտրուած է Միացեալ Նահանգներու եւ Սովետական Միութեան դրոշմա-

թողթերու սպասարկութեան կողմէ որպէս մարդասիրական յիշատակութեան խորհրդանշան, երկու պետութիւններու միջեւ ստեղծուած բարեկամութեան առթիւ:

Ի՞նչպէս պատրաստուեցաւ այս ժապաւէնը

1981-ին, Սարոյեանի մահէն ետք, Գալիմեան գրեց եւ բեմադրեց վերոյիշեալ վաերագրական ֆիլմը, որ միջազգային փառատօներու մրցոյթներուն շահած է վեց մրցանակներ, ինչպէս նաեւ Ֆիլատելֆիոյ Միջազգային Ֆիլմերու Փառատօնին՝ ոսկեայ մրցանակ, որպէս լուսագոյն վաերագրական ժապաւէն:

Բացառիկ այս գործը մեզի մօտէն կը ծանօթացնէ համաշխարհային համբաւի տիրացած, Փոլիցեր մրցանակի եւ Օսքարի արժանացած Ամերիկահայ գրող, թատերագիր եւ ազգասէր՝ Ուիլիըմ Սարոյեանի կեանքն ու գործը:

Այս ժապաւէնը մինչ այդ ցուցադրուած է 15 երկիրներու 42 քաղաքներուն մէջ՝ աւելի քան 300.000 անձերու: Միացեալ Նահանգներ, Գանատա, Աւստրալիա, Եւրոպա եւ Միջին Արեւելքէն վերջ ահա եւ հիմա հոս, այս սրահին մէջ ցուցադրուելով ան կը շարունակէ իր շրջապտոյտը: Ցանկին վրայ կան Հարաւային Ամերիկա, Ափրիկէ, Ծաբոն եւ վերջապէս՝ Երեւան-Հայաստան:

Գալիմեան մինչ այդ պիտի ցուցադրէ վերոյիշեալ դրոշմաթողթերը, կնքուած՝ առաջին օրուան թուականով:

Արա Կիլերի Սարոյեանական Նկարները

Նոյն առթիւ, դարձեալ Աճառեան սրահին մէջ տեղի պիտի ունենայ միջազգային համբաւի տէր Արա Կիլեր վարպետին «Սարոյեանական նկարներ»ուն ցուցահանդէսը:

ԼՈՒՍԱՆԿԱՐ՝ ՖԻԲՐԷԹ ՕԹԵԱՍՐ

